ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-28-18

ք. Երևան 14 «03» 2018թ.

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը**, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Սմարթլայն» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **տնօրենՏ. Ղարիբյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողըպարտավորվումէսույնպայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանվածկարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդինմատակարարել պայմանագրի N 1 հավելվածով`Տեխնիկականբնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկԳնորդըպարտավորվումէընդունել ապրանքըևվճարելդրահամար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի`**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրիցավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք` պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1 721 500(Մեկ միլիոն յոթ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

*3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը*

*կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (որը կսահմանվի սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվող համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում) (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝ Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որ Գնորդիմոտչիվերացել ապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվել մեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելիքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

| | |
|---|---|
| **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | **«Սմարթլայն» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110 |
| Հ/Հ՝ 900013010013 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 163007031509 |
| ՀՎՀՀ 02505983 | ՀՎՀՀ 01548908 |
| ---------------------------Ա.Կարապետյան | ------------------------------------Տ.Ղարիբյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 14 » 03 20 թ. կնքված*
*ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 – 28-18 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավեր-ով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 30121500/329 | Քարթրիջներ Helwlett-Packard | Ճապոնիա | **HP LJ 2035, 2055 CE505A** օրիգինալ, ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը` սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2300 էջ տպելու հնարավորությամբ: | հատ | 31000 | 310000 | 10 | Ա.Մկրտչյան 5 | 10 | *Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և* |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 30121500/336 | Քարթրիջներ Helwlett-Packard | Ճապոնիա | **HP LJ 1020 Q2612A**,օրիգինալ, ISO/IEC ստանդարտինհամապատասխան, գույնը՝ սև, գործարանայինփաթեթավորմամբ, առնվազն 2000 էջտպելունհնարավորությամբ: | հատ | 27700 | 277000 | 10 | Մ.Մկր-տչյան 5 | 10 | *այդ միջոց-ների շրջա-նակ-ներում կողմերի միջև կնք-վող համա-ձայնա-գրով սահման-ված ժամ-կետնե-րում՝ 2018թ. արտա-բյուջեռվաա հիմն-վողեռա-մայա-կայինհամ ամասնու-թյուն-ներինհամ ապատաս խան* |
| 3 | 30121500/332 | Քարթրիջներ Helwlett-Packard | Ճապոնիա | **Canon LBP 3010, Canon 85A**,օրիգինալ, ISO/IEC ստանդարտինհամապատասխան, գույնը՝ սև, գործարանայինփաթեթավորմամբ, առնվազն 1500 էջտպելունհնարավորությամբ: | հատ | 27700 | 138500 | 5 | Մ.Մկր-տչյան 5 | 5 | |
| 8 | 30121500/331 | Քարթրիջներ Helwlett-Packard | Ճապոնիա | **HP LJ Pro MFP M225dn, 83A CF 283A**օրիգինալ, ISO/IEC ստանդարտինհամապատասխան, գույնը՝ սև, գործարանայինփաթեթավորմամբ, առնվազն 2000 էջտպելունհնարավորությամբ: | հատ | 27200 | 408000 | 15 | Մ.Մկր-տչյան 5 | 15 | |
| 10 | 30121500/333 | Քարթրիջներ Helwlett-Packard | ՉԺՀ | **Քարթրիջ HP 55X (CE255X)**<br>ԷյչՓի 55էքս (ՍիԻ255էքս)<br><br>**Производитель** Արտադրող: **HP** ԷյչՓի<br>**Модель** Մոդել: **CE255X (№55X) (экономичны** ՍիԻ255էքս (№55էքս) (տնտեւ<br>**Тип оборудования** Սարքի տեսակը: **Черный Картридж** Սև քարթրիջ<br>**Описание** Նկարագրութ: **Оригинальный картридж HP** Բնօրինակ քարթրիջ էյչփի | հատ | 98000 | 588000 | 6 | Կառա-վա-րական տուն 3 | 6 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | յունր | | | | | | | | | |
| | | | | Ресурс<br>Ռեսուրս | 12500 страниц<br>12500 էջ | | | | | | | | |

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

*Մատակարարումը կիրականացվի Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված գնման ժամանակացույցով:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | **«Սմարթլայն» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք. Երևան, Ս. Մկրտչյան 5 | Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110 |
| Հ/Հ՝ 900013010013 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 163007031509 |
| ՀՎՀՀ՝ 02505983 | ՀՎՀՀ 01548908 |
| ------------------------**Ա.Կարապետյան** | ------------------------------**Տ.Ղարիբյան** |
| (ստորագրություն) *Կ.Տ.* | (ստորագրություն) |
| | *Կ.Տ.* |

Հավելված N 2
«14» 03 2018 թ. կնքված
ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-28-18 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերովնախատեսվածչափաբաժնիհամարը | գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV) | անվանումը | Տնտեսագի-տականդասակարգում | |
| 1 | 30121500/329 | Քարթրիջներ | 5122 | Վճարումնիրկանացվելուէպայմանագրովնախատեսվածֆինանսականմիջոցներիառկայությանդեպքումկողմերիմիջևկնքվողհամաձայնագրիհիմանվրա՝ վճարմանժամանակացույցին համապատասխան |
| 2 | 30121500/336 | Քարթրիջներ | 5122 | |
| 3 | 30121500/332 | Քարթրիջներ | 5122 | |
| 8 | 30121500/331 | Քարթրիջներ | 5122 | |
| 10 | 30121500/333 | Քարթրիջներ | 5122 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Արտաբյուջե՝ 900013010013<br>Ընդամենը՝ 1721500 | | | | |

** Վճարումներըտակագումարներըներկայացվում են աճողականկարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | **«Սմարթլայն» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110 |
| Հ/Հ՝ 900013010013 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 163007031509 |
| ՀՎՀՀ՝ 02505983 | ՀՎՀՀ 01548908 |
| -------------------**Ա.Կարապետյան** | ------------------------------- **Տ.Ղարիբյան** |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N 3
« 14 » 03 2018թ. կնքված
ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 28-18 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելուվայրը ______________ | գտնվելուվայրը ______________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «              » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ __________
Պատվիրատուն`իդեմս ______________________________________________________________և
Պայմանագրիկողմը`իդեմս______________________________________________,
հիմքընդունելովՊայմանագրիկատարմանվերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնմանհայտընախազծածներկայացուցչի N եզրակացությունննայնմասին, որՊայմանագրովնախատեսված՝ ստորևնշվածմատակարարումներըհամապատասխանումենՊայմանագրովամրագրվածտեխնիկականբնութագրերին և գնմանժամանակացույցին՝ կազմեցինսույնարձանագրությունըհետևյալիմասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըմատակարարելէհետևյալապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | Տեխնիկականբնութագրի համառոտշարադրանքը | քանակականցուցանիշը | | կատարմանժամկետը | | Վճարմանենթակագումարը /հազարդրամ/ | Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/ |
| | | | ըստպայմանագրովիհաստատվածգնմանժամանակացույցի | Փաստացի | ըստպայմանագրովիհաստատվածգնմանժամանակացույցի | Փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալմատակարարումներիկատարմանվերաբերյալբոլորհաշիվ-ապրանքագրերըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասը և կցվումեն:

| Ապրանքըհանձնեց | Ապրանքնընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 14 » 03 2018 թ. կնքված*
*ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով պայմանագրի*
28-18

ԱԿՏ N ______
պայմանագրիարդյունքըԳնորդինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________________
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. __________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ____________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափմանմիավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույնակտըկազմված է 2 օրինակից, յուրաքանչյուրկողմինտրամադրվում է մեկականօրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** հայտընախագծծներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 14.03.2018թ. N ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-28-18ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06.04 «» 2018թ.

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը**, ի դեմս աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<Սմարթլայն>>ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրենտնօրեն **Տ. Ղարիբյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր և հիմք ընդունելովՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և **<<Սմարթլայն>>ՍՊԸ**-ի միջև 14.03.2018թ. կնքված թիվ ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-28-18 ծածկագրով պետական գնման պայմանագրի 3.2 և 8.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբկնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքի գնման և վճարման ժամանակացույցերը՝ համաձայն Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

1.2Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված №1-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 14.03.2018թ. կնքված թիվ ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-28-18 Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է՝էջից, կնքված են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | **«Սմարթլայն» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110 |
| Հ/Հ՝ 900013010013 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 163007031509 |
| ՀՎՀՀ 02505983 | ՀՎՀՀ 01548908 |
| ------------------Ա.Կարապետյան | ------------------Տ.Ղարիբյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված 1
<<06>> 04 2018 թ. կնքված
N 1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը և ապրանքային նշանը | Արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 30121500/329 | Քարթրիջներ Helwlett-Packard | Ճապոնիա | **HP LJ 2035, 2055 CE505A** օրիգինալ, ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը` սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2300 էջ տպելու հնարավորությամբ: | հատ | 31000 | 310000 | 10 | Մ.Մկրտչյան 5 | 10 | 3-րդ եռամսյակ |
| 2 | 30121500/336 | Քարթրիջներ Helwlett-Packard | Ճապոնիա | **HP LJ 1020 Q2612A,** օրիգինալ, ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը` սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ: | հատ | 27700 | 277000 | 10 | Մ.Մկրտչյան 5 | 10 | 3-րդ եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 30121500/332 | Քարթրիջ-ներ Helwlett-Packard | Ճապո-նիա | **Canon LBP 3010, Canon 85A,** օրիգինալ, ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 1500 էջ տպելու հնարավորությամբ: | հատ | 27700 | 138500 | 5 | Մ.Մկր-տչյան 5 | 5 | 3-րդ եռամս-յակ |
| 8 | 30121500/331 | Քարթրիջ-ներ Helwlett-Packard | Ճապո-նիա | **HP LJ Pro MFP M225dn, 83A CF 283A** օրիգինալ, ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ: | հատ | 27200 | 408000 | 15 | Մ.Մկր-տչյան 5 | 15 | 3-րդ եռամս-յակ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 30121500/333 | Քարթրիջ-ներ Helwlett-Packard | ՉԺՀ | **Քարթրիջ** HP 55X (CE255X)<br>էյչՓի 55էքս (ՍիԻ255էքս) | | hատ | 98000 | 588000 | 6 | Կառա-վա-րական տուն 3 | 6 | 3-րդ եռամս-յակ |
| | | | | **Производитель**<br>Արտա-դրրող | **HP**<br>էյչՓի | | | | | | | |
| | | | | **Модель**<br>Մոդել | **CE255X (№55X) (экономичный)**<br>ՍիԻ255էքս (№55էքս) (տնտեսող) | | | | | | | |
| | | | | **Тип оборудования**<br>Սարքի տեսակը | **Черный Картридж**<br>Սև քարթրիջ | | | | | | | |
| | | | | **Описание**<br>Նկարագրությունը | **Оригинальный картридж HP**<br>Բնօրինակ քարթրիջ էյչփի | | | | | | | |
| | | | | **Ресурс**<br>Ռեսուրս | **12500 страниц**<br>12500 էջ | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983
-------------------------Ա. Կարապետյան
(ստորագրություն) Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
------------------------------- Տ.Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 2*
*<<06>> 04 2018թ. կնքված*
*N1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| հրավերովնախատեսվածչափաբաժնիհամարը | գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV) | անվանումը | Տնտե-սագի-տականդասակար-գում | Ապրանքի դիմացվճարումներընախատեսվում է իրականացնել արտարյուջեից 2018թ-ին՝ ըստամիսների, այդթվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 30121500/329 | Քարթրիջներ | 5122 | - | - | - | - | - | - | 310000 | 310000 | 310000 | 310000 | 310000 | 310000 | 310000 |
| 2 | 30121500/336 | Քարթրիջներ | 5122 | - | - | - | - | - | - | 277000 | 277000 | 277000 | 277000 | 277000 | 277000 | 277000 |
| 3 | 30121500/332 | Քարթրիջներ | 5122 | - | - | - | - | - | - | 138500 | 138500 | 138500 | 138500 | 138500 | 138500 | 138500 |
| 8 | 30121500/331 | Քարթրիջներ | 5122 | - | - | - | - | - | - | 408000 | 408000 | 408000 | 408000 | 408000 | 408000 | 408000 |
| 10 | 30121500/333 | Քարթրիջներ | 5122 | - | - | - | - | - | - | 588000 | 588000 | 588000 | 588000 | 588000 | 588000 | 588000 |
| Ընդամենը՝ | | | | - | - | - | - | - | - | 1721500 | 1721500 | 1721500 | 1721500 | 1721500 | 1721500 | 1721500 |

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983
-------------------Ա.Կարապետյան
(ստորագրություն) Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
------------------------------Տ.Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.